



Տպարանս փոխադրուած է Պապը ալի
նատտէսի թիւ 38, Իգտամ լրագրին դէմ:

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ




ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ



Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ ՀՀ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1902



ԱՄԵՆԱԳՈՏԻԻ

Տ. Տ. ՄԱՆԱԿ ԱՐՔԵՊԻՍԿ, ԽԱՊԱՆԵԱՆ

ԸՆՏՐԵԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԱՄԵՆԱՊԱՏԻ

Տ. Տ. ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿ, ԽԱՊԱՆԱՆ

ԸՆՏՐԵԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Անցեալ չաբաթ օր (12 հոկտ.) Պատրիարքարան հասած հեռագիր մը կը ծանուցանէր Ամեն. Տ. Տ. Սահակ Ս. Արքեպիսկոպոս Խապաեանի՝ միաձայնութեամբ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ընտրուելը :

Ձայնակցելով Հայ Մամուլին՝ այս ընտրութեան արժանաւորութեան վրայ, մեր դեռատի ընթերցողներուն կը ներկայացընենք Սահակ Սրբազանի կեանքն՝ իրր ինքնօգնութեան մէկ կենդանի տիպարը :

Տ. Սահակ Սրբազան ծնած է 1849ին, Խարբերդի Եղէգի գիւղը, հայրն էր Մահտեսի Կարապետ, իսկ մայրը Գոհար :

Գարրիէլ (Սրբազանին մանկութեան անունը) փութով աւարտեց իր ծննդավայրին գիւղական դպրոցի ընթացքը և ստիպեց հայրը, որ զինքը Մէզրէի վարժարանը ղրկէ :

Մահտեսի Կարապետ, տեսնելով իր զաւկին դաստիարակուելու համար ունեցած փափաքը, միտքը դրաւ Երուսաղէմ տանիլ և Ս. Աթոռին որդեգրել, և իրաւաւ հոն հասնելով կրցաւ այն ատենուան Երուսաղէմի Պատրիարք Տ. Եսայիի ուշադրութիւնը գրաձնել տալ իր զաւկին վրայ :

Ժառանգաւորաց վարժարանին մէջ, Գարրիէլ այնքան օրինակելի վարք մը ունեցաւ և այնքան ուսման յարմարութիւն ցուցուց որ, երբ Եսայի Պատրիարք՝ Ս. Աթոռին մտաւոր մակարդակը բարձրացընելու դիտաւորութեամբ ուղեց քանի մը պատանիներ Պոլիս ղրկել մասնաւոր կրթութիւն մը ստանալու համար, ամէնէն առաջ իր ընտրութիւնը ինկաւ Գարրիէլ պատանիի վրայ, եւ զայն անմիջապէս սարկաւագ ձեռնադրելով՝ երկու ընտրեալներու հետ մայրաքաղաքս ղրկեց, Այս պատանին իր աշխատասիրութեան հետ ունէր նաեւ քարոզիչի բնական ձիրքը, այնքան բարձր աստիճանի մը վրայ՝ որ ժամանակին Պոլսոյ Պատրիարքը (արդի Ս. Հայրապետը)

Թոյլատրած էր անոր Մայր Եկեղեցիի մէջ քարոզ իր իսկ ներկայութեանը :

Գարրիէլ սարկաւագ իր երկու ընկերներուն հետ երբեմն կ'այցելէր Խասգիւղի Նուպար-Շահնազարեան վարժարանը եւ ներկայ կը գտնուէր դասախօսութիւններուն : Երեք տարի Պոլիս մնալէ յետոյ Երուսաղէմ կը վերադառնայ :

Երբ Տ. Մելքիսեդեկ Սրբազան, որ Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանի տեսուչ էր, Զմիւռնիոյ վիճակին առաջնորդ կ'ընտրուէր, իրեն տեղ 1874ին վարժարանին տեսչութեան կը կոչուէին Գարրիէլ, Մելքոն եւ Մաքսուտ սարկաւագները : Այդ օրէն Գարրիէլ դպրոցին վարիչը կը դառնայ :

1877ին Եսայի Պատրիարք արեղայ կը ձեռնադրէ հինգ ընկերներով և Գարրիէլ սարկաւագ կը կոչուի Սահակ : Եւ տարի մը յետոյ վարդապետական իշխանութիւն ըստացան :

Երեք տարի վերջ՝ իր ծննդավայրը այցելութեան կ'երթայ, բայց Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանը բոլորովին անխնամ մնալով՝ Եսայի Պատրիարքի հրամանով վերստին Երուսաղէմ կը դառնայ եւ նորէն ձեռք կ'առնէ տեսչութեան պաշտօնը :

Երբ Երուսաղէմի վանքը ահագին պարտքի տակ կը հեծէր, և Պատրիարք ու Միաբանութիւն չուարած էին, ինքն էր որ Մամբրէ վարդապետին հետ Կովկասիա գընաց, ուսկից անցաւ Ռուսիա, այցելելով 5.600 քաղաքներ ու գիւղեր, քարոզելով, տեղացիներուն բարքերը ուսումնասիրելով :

Այս ճամբորդութեան միջոցին է որ լուր կ'առնէ թէ՛ Միաբանական ընդհ. Ժողովին կողմէ Ս. Աթոռին Լուսարարապետ կարգուած է : Սահակ Սրբազան, դեռ 35 տարեկան չկար սոյն ամենակարեւոր պաշտօնի կոչուած ատեն, եւ Երուսաղիմայ Պատրիարքէն վերջ՝ ամէնէն մեծ հեղինակութիւն ունեցող Լուսարարապետն է :

1885 նոյեմբ. 24ին Մակար Կաթողիկոս, իր անդրանիկ ձեռնադրութիւնը կը կատարէ՝ Եպիսկոպոսացնելով Մամբրէ եւ Սահակ վարդապետները :

Սահակ Սրբազան, Լուսարարապետի պաշտօնը ստանձնելով՝ կ'սկսի բարեկարգել Ս. Աթոռը, կարգի դնել վանքին մատենադարանը, որուն 2000 է աւելի տպա-

գիր եւ 2000 ի չափ ձեռագիր գրքերը ան-
խընամ վիճակի մը մէջ էին: Նոյնպէս կը
վերաշինէ եկեղեցական անօթներու եւ ըզ-
գեստներու գանձարանը:

Մակար Կաթողիկոսի վախճանմանէն
ետքը, 1892ին Սահակ Սրբազան Ս. Աթո-
ռին կողմէն էջմիածին կ'երթայ, իրբեւ
պատուիրակ Կաթողիկոսական ընտրու-
թեան ժամակցելու: Իր պաշտօնը կատա-
րելէ յետոյ կը վերադառնայ Պոլիս եւ ան-
կից ալ երեսօղէմ, եւ կ'ստանձնէ Ժողովու-
րդաւորաց վարժարանի տեսչութիւնը:

Նորին Սրբազնութիւնը Լուսարարագե-
տութեան եւ տեսչական պաշտօնին հետ եւս
կը պարապէր ուսումնական գործերով եւ
մասնաւորաբար զբաղուէր ցուցակին
պատրաստութեամբ: Այս միջոցին (1898
յուլիս 30) Ն. Սրբազնութիւնը հրաժարու-
ցաւ Ատանա՝ նախագահելու ընտրողական
Ժողովոյ, եւ երբ Երէցեան Դէոյք Սրբազան
Կաթողիկոս ընտրուեցաւ, ինքը վերադար-
ձաւ Երեսօղէմ, բայց Ն. Սրբազնութեան
հրաժարելէն յետոյ, ներկայ տարւոյս մէջ՝
ի նորոյ կառարարած Ընտրողական Ժողո-
վոյ միաձայն քուէովը՝ Կիլիկիոյ Կաթողի-
կոս հռչակուեցաւ:

Հանրագիտակի խմբագրութիւնն, իր
հարիւրաւոր մանուկ ընթերցողներուն հետ
եւս կը փութայ իր անկեղծ խնդակցու-
թիւններն ու սրտագին բարեմաղթութիւն-
ներն ուղղել հրապարակաւ Ամեն Տ. Ս.
Կաթողիկոսին:

Հոկտ. 19 թուով՝ Ամենայ. Ս. Պատ-
րիարք Հօր զրկած հեռագրով մը, Տ. Սա-
հակ Սրբազան կ'իմացնէ Կիլիկիոյ Կաթողի-
կոսական պաշտօնին ընդունիլը:

Սուրհանդակ լրագրին մէջ հրատարակուած ըն-
դարձակ կենսագրականէ մը համառօտելով Տ. Սա-
հակ Սրբազան կաթողիկոսի կենսագրական գլխաւոր
կէտերը, սոյն առթիւ մեր խորին շնորհակալութիւնն
կը յայտնենք նոյն լրագրին Տէր եւ Տնօրէն Մեծ.
Տիգրան Էֆ. ձեռնարկներ, որ սիրայօժար մեզ
յանձնեց յուսանկաջ կաղապարն, որով պատիւ
կ'ունենանք Հանրագիտակի ծակաւոր զարդարել:



ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ԱՂԶԻԿՆԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՋ

« Հաստատել խորհելու, զգալու
գործելու սովորութիւններ. ահա
անոր մէջն է ամբողջ դաստիարա-
կութիւնը »:

Գ. — ՄԱՐԴԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ԾՆՆԴԱՎԱՅՐԸ. — ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԵՊԻ
ՄԵՐ ՀՈԳԻՆ — ԱՐՏԱՔԻՆ ԲԱՐԻՔՆԵՐ

13. Պարտականութիւնը կատարելուն մեզ
արժանիք կայ

Վարդուհին կ'ըսէ « Դպրոց երթալը զիս
կը ձանձրացնէ. » Մայրը կը պատասխանէ
« Պէտք է երթալ: »

Վարդուհին կ'ըսէ, « Բան մը գտայ, ինձ
պիտի պահեմ. » Մայրն անոր կ'ըսէ, « Ոչ
պէտք է տէրջը վերադարձնես: »

Վարդուհին անհամբեր է, անչնորհք
պատասխան մը պիտի տայ հօրը, որ հրա-
ման մը կուտայ իրեն: Մայրն անոր կ'ըսէ
« Լսէ Վարդուհի, պէտք է հնազանդիս »:

Դպրոց երթալ, գտած առարկան իրեն
չպահել, հնազանդիլ հօրը, չպատասխանել
անստիպարար, ահա Վարդուհիի մի քանի
պարտականութիւնները. ահա ինչ կը նշա-
նակէ պարտականութիւն:

Վարդուհին դեռ ուրիշ շատ պարտա-
կանութիւն ունի, այնպիսիներ, որ դուք
ալ ունիք: Այս բոլոր պարտականութիւն-
ներ կատարելը հաճելի չէ, որովհետեւ մեր
ճաշակին, մեր հակումներուն, մեր գաղա-
փարին հակառակ են: Եւ գլխաւորաբար
անոր համար, որ ձանձրանալի, նեղացուցիչ
են եւ թէ աւելի խնամքով պէտք է անոր
յարիլ: Որչափ պարտականութիւն մը դժ-
ուար է, այնչափ աւելի յարգի է եւ կա-
տարելն աւելի արժանիք ունի:

14. Նրջանկութեան առաջին գաղտնիք՝
Մահուր խիղճ ունենալ

Փոքրիկ աղջիկ, այն ձայնը, որ քեզ կը
խօսի եւ կը յանդիմանէ երբ գէշ բան մ'ը-
նես՝ խիղճ է: Դանձեալ խիղճ է, որ

քեզ կը քաջալերէ և կը շնորհաւորէ երբ բարի գործ մ'ընես ու խելացի լինիս:

Քու խիղճդ, քու հոգիդ է, որ Աստուած ստեղծեր է բարի գործելու համար և կը տխրի երբ չար գործես: Որովհետեւ բարին համար ստեղծած է խիղճդ, որ քեզ այնչափ գոհ և ուրախ կ'ընէ, երբ բարի գործես, երբ պարտականութիւնդ լաւ կատարես, երբ մէկուն ծառայութիւն մը՝ օգնութիւն մ'ընես, որուն նա պէտք ունի: Կ'ուզե՞ս միշտ երջանիկ լինիլ: Լսէ, մօտեցիր հոս, շատ մօտիկ, քեզ երջանկութեան գաղտնիքը պիտի տամ: Երբէք բան մը մի' ըներ, որ խիղճդ քեզ յանդիմանէ և ըրէ ինչ որ քեզ կը յանձնարարէ: Ոչ հարստութիւնը, ոչ լաւ դիրքը, ոչ գեղեցկութիւնը երջանիկ կ'ընէ մարդ: Մաքուր խիղճը կուտայ երջանկութիւն:

15. Երջանկութեան երկրորդ գաղտնիք՝ Ուրիշներուն անձնուէր լինիլ

Մարիամ դպրոց կ'երթայ: Ճանապարհին վրայ կը հանդիպի խեղճ կոյր կնկան մը, որ չէր համարձակեր փողոցին միւս կողմն անցնիլ և Մարիամ անոր կ'օգնէ անցնելու համար:

Դպրոցին մէջ Մարիամ լուռ կը կենայ, ուշադրութեամբ կը լսէ վարժուհիին տուած բացատրութիւնները: Ձեռագործի դասի ժամանակ իր փոքր եղբորը բուրգէ գուլպաները կը նորոգէ. որովհետեւ իր մայրը շատ զբաղուած լինելուն պիտի չկրնար նոյն օրը նորոգել եւ թերեւ տղան պիտի նեղուէր ցուրտէն: Դպրոցէն վերադառնալով Մարիամ կ'օգնէ մօրը առտնին գործերու մէջ. սեղանը կը պատրաստէ, կերակուրին կը հսկէ և ամանները կարգի կը դնէ:

Գիշերը, Մարիամ պառկելէ առաջ կը բացագանչէ « Ես շատ գոհ եմ »:

Ի՞նչ է ուրեմն, որ Մարիամին այսչափ գոհունակութիւն կը պատճառէ:

Դպրոցի ճանապարհին վրայ գա՞նձ մը գտած է, գեղեցիկ ընծա՞յ մը ստացած է, իրեն գովասանք մ'ըրած են, զբօսանք մ'ըրած է: Ո՛չ, ասոնցմէ ո՛չ մին: Մարիամ կատարած է իր բոլոր պարտականութիւնը: Ուրիշներուն անձնուէր եղած է. եւ այս իր սիրտն ուրախութեամբ լեցուցեր

է: Ուրիշներուն համար ինքզինքը մոռնալ ահա երջանկութեան մէկ ուրիշ գաղտնիքը:

16. Երջանկութեան երրորդ գաղտնիք՝ Ունեցածովը գոհանալ

Կը գանգատիս, փոքրիկ աղջիկ՝ անիրաւ ես:

Դուն առո՞ղջ ես, — Այո՛. — լաւ ուրեմն, նայէ եւ ցաւէ հիւանդներուն վրայ:

Մարմինդ ուղի՞ղ է, լաւ աչքեր ունի՞ս, թեթեւաշարժ արունքներ ունի՞ս, — Այո՛. — լաւ ուրեմն նայէ և տե՛ս խեղճ խեղանդամները:

Լաւ ախորժակ ունի՞ս, հաճութեամբ կ'ուտե՞ս տանդ մէջ պատրաստուած պարզ կերակուրը, — Այո՛, — լաւ ուրեմն, տես անոնք, որ պատառ մը չոր հաց չունին իրենց անօթութիւնը մեղմելու համար:

Սենեակ մ'ունի՞ս ուր բնակիս, անկողին մը ուր քնանաս, հագուստներ՝ օդի փոփոխութեան դէմ պաշտպանուելու, — Այո՛, — լաւ ուրեմն նայէ այն դժբախտներուն, որ ոչ ապաստանարան ունին եւ ոչ ալ հագուստ:

Հայր մ'ունի՞ս, մայր մը, եղբայրներ, ընտանիք սիրելու եւ անկէ սիրուելու համար. — Այո՛. — լաւ ուրեմն, նայէ անոնց, որ ամէնքը կորուսած են, որ կեանքի մէջ միեակ են, առանց սիրոյ եւ առանց գուրգուրանքի:

Տղայ, շուրջդ նայէ, քեզմէ վա՛ր նայէ, տե՛ս թէ որչափ թշուառներ կան: Մի՛ գանգատիր, այլ ցաւէ անոնց վրայ, եւ ջանա՛ անոնց օգնել:

Գիտցիր Աստուծոյ տուած քէչովը երջանիկ լինիլ:

17. Երջանկութեան չորրորդ գաղտնիք՝ Բնութիւնը սիրել

Տղայ, բնութեան նայէ, տե՛ս թէ ինչպէս գեղեցիկ է նոր գարնան՝ իր անուշ կապոյտ երկինքովը, իր փափուկ կանաչովը և հազարաւոր ծաղիկներով որ դաշտին մէջէն կը քաղես:

Տե՛ս, թէ ի՞նչպէս հրապուրիչ է ամառն իր սպիւզոյն ցորեններով, իր բարձր խոտերով, վարդենիներուն վրայ բացուած

վարդերով և անուշաբոյր հոտերով, որ երեկոյները երկրէն կը բարձրանայ:

Տե՛ս, թէ ի՞նչպէս հարուստ է աշունը իր պտուղներով, որոնց տակ ծառերու ճիւղերը կը ճկին, ոսկեգոյն, պղնձագոյն, յակընթագոյն տերեւներովը, որով անտառները զարդարուած են:

Տե՛ս, թէ ի՞նչպէս արգահատելի և տըխուր է ձմեռը, ձիւնով կը ճերմկի դաշտը, եղեամբ որ կը փայլի մերկացած ճիւղերուն վրայ և տփգոյն արեւը, որ հագիւ կը թափանցէ մառախուղի քողը:

Նայէ՛ բնութեան. բայց նայած ատեն փորձէ հասկնալ: Ո՞վ ստեղծե՞ր է այսպէս: Ո՞վ ստեղծե՞ր է երկինքը աստղերով լի: Ո՞վ ստեղծե՞ր է այս երկիրը մարգիկներով կենդանիներով և տունկերով լի: Վայելէ այս տեսարանը, խորհէ այս մեծ հրաշալիքին վրայ, հիացիր բոլոր այս գեղեցկութեան վրայ: Դու հոգիիդ մէջ շատ քաղցր բանի մ'արթննալը պիտի զգաս եւ անով պիտի ուրախանաս: Սիրել բնութիւնը, հաճութեամբ անոր նայիլ՝ դարձեալ երջանկութեան գաղանիք մ'է:

18. Երջանկութեան հինգերորդ գաղտնիք Ընթերցանութիւն սիրել

Դու չես կրնար երեւակայել, փոքրիկ աղջիկ, որ պիտի գայ օր մը, երբ մազերդ ճերմկին, պիտի ծերանաս խորշովիս եւ տըգեղնաս: Չես կրնար հաւատալ թէ պիտի գայ վայրկեան մը, որ պիտի չկրնաս վազել, ցատկել, զրօսնուլ եւ մանաւանդ չես կրնար երեւակայել, որ պիտի գայ ժամանակ մը: Երբոր դու մինակ մնաս կեանքի մէջ մեկուսացած, որովհետեւ ծնողներդ, բարեկամներդ անհետացած պիտի լինին: Այն ատեն ի՞նչ պիտի ընես զքեզ զրօսցնելու համար, դեռ միտքդ սնուցանելու և վիշտերդ մոռնալու համար:

Դու պիտի կարդաս, պիտի կարդաս կըրթիչ եւ հաճելի բաներ: Դու պիտի հետաքրքրուիս գիտուններուն գիւտերովը, օգտակար հնարքներովը, որ պիտի երեւակայեն այն ատենուան երիտասարդները իմաստութեամբ լի:

Դու պիտի կարդաս գիրք գրելու ձիրք ունեցողներուն գրուածները: այնպիսի բա-

նէր, որ կը խնդացնեն, կը լացնեն եւ անուշ կերպով սիրտ կը յուզեն. եւ դու երբէք պիտի չձանձրանաս և դեռ երջանիկ պիտի լինիս թէպէտ ծեր, տկար և տգեղ, որովհետեւ քովդ միշտ բարեկամ մը պիտի ունենաս, որ քեզի միշտ հաւատարիմ պիտի լինի, այն է լաւ գիրք մը:

ՏԻԿԻՆ Փ. ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ



Հետեւեալ ճառը խօսած է Կէտիկ-Փաշայի Ս. Մեսրոպեան վարժարանի 1901-1902 շրջանի ընթացաւարտ սանուհիներէն Օր. Անժէլ Հանրմեան, Վկայականներու բաշխմանց հանդէսին, որ տեղի ունեցաւ ամսոյս 11ին Հայոց Պատրիարքարանին մէջ:

Ա Մ Ե Ն Ա Պ Ա Տ Ի Ի

Ս. ՊԱՏՐԻԱՐԻ ՀԱՅՐ

Արդարեւ չկայ բան մը որ աննպատակ ըլլայ Արարչին գործերուն մէջ. ամէն ինչ նախասահմանուած որոշ նպատակի մը համար ստեղծուած է Անոր կողմէ, և ամէն ինչ կը դիմէ գիտակցաբար կամ անգիտակցաբար այդ որոշ նպատակին:

Արարչագործութեան մէջ, որովհետեւ բարի է Աստուած և բարի են անոր գործերը, ամէն բան ունի իր դատականիքը, նպատակակէտը՝ որուն սահմանած է Աստուած. չարը դրուած ու տրուած է միայն և միայն բարիին, գեղեցիկին ու ճշմարիտին առաւելութիւնները շեշտելու համար աւելի ցայտուն կերպով:

Մենք ալ, Հայր Արքազան, Կէտիկ-Փաշայի Ս. Մեսրոպեան Սաները, որոնց ի դիմաց համարձակութիւն կ'ստանամ Ձեր Բարձր Սրբազնութենէն՝ մի քանի բառ խօսիլ արապայտելու համար այս պահուս մեր զգացած խոր տպաւորութիւնները և անպատում հրճուանքը. մենք ալ Հայր Պատուական, կը կարծենք հասած ըլլալ նպատակի մը, մեզ համար մեր կարողութեան չափով՝ բաւական դժուար հասանելի. նպատակ մը՝ որ երթալով հորիզոնի մը պէս կը հեռանար մենէ, քանի կ'ուզէինք իրեն մօտենալ:

Ո՛հ, Աստուած իմ, որքա՛ն դժուարին է ուսման այս անձայրածիր ովկիանին նաւա-

ու կտրեն անցնին պիտի այս ահեղ ծովը, Ափրիկեան ծովեզերքները պիտի ելլեն, արեւոտ, տաք երկիրները:

Բայց ամէնէն տկարները ընկճուած են յոգնութեան տակ: Մէջերնէն մէկը, որ ճամբան վերադարձուած էր, հիւրնդցեր էր, իյնալու մօտ: Կը դողար, մտածելով նոր վտանգներու դիմագրելու պէտքը:

— Օհ, աղաղակեց սարսուռով, ծովուն այս ստատիկ հովին հետ ինտո՞ր ոգորիլ, Կոհակներուն խորքին մէջ պիտի խորասուզուիմ:

Բայց ուրիշ ծիծեռնակ մը, որ ամբողջ ճամբան անոր քովէն թռչած էր, գթաց անոր վրայ,

— Բանէ մը մի՛ վախնար, քոյր իմ, մենք քեզի պիտի օգնենք: Չե՞ս գիտեր, ծիծեռնակներուն մէջ սովորութիւն է օգնական ըլլալ տկարներուն: Եթէ թեւերդ կը քին, զանոնք մերիններուն վրայ պիտի կռնցնես, ու մերինները քեզ պիտի վերցնեն:

— Ափսո՛ս, արդէն ամբողջ ճամբան բերիք զիս գրեթէ. ի՞նչպէս պիտի հատուցանեմ փոխարէնը:

— Գո՛յր իմ, յաջորդ տարին, քու փոքրիկ թեւերդ ուժովն պիտի. այն ատեն դուն ալ քու կարգիդ պիտի օգնես քեզնէ պզտիկներուն: Ի՞նչ աւելի քաղցր քան զօրավիգ ըլլալ տկար թռչուններուն: Ո՞վ քոյր իմ, կռթնէ՛ մեզի, երթանք:

Այն ատեն ամէնէն ուժովները, ինչպէս կը տեսնուի ամէն տարի, խումբին գլուխը անցան ճամբայ բանալու համար իրենց քոյրերուն: Ուրիշներ, ընտրուած կորովիներուն մէջէն, աջ ու ձախ կողմը կեցան, արագացնելով կարգերը, հսկելով վերջին նորածիններուն, տղաքներուն, որոնց թեւերը շուտ կը հոգնին:

Եւ անցան կոհակներուն վրայէն՝ երգելով ծաւի երկինքին մէջ:

Թարգմ. ՎԱՀՐԱՄ Յ. ԳԱՐԱԳԱՅԵԱՆ



ՄԱՐԻ-ՀԱՆՐԻԹ

ԹԱԳՈՒՀԻ ՊԵՆՃԻԳԱՅԻ

Պելճիգայի Մարի-Հանրիթ. թագուհին վրայ շատ չէր խօսուէր: Վերջին հիւանդութիւնը առիթ տուաւ որ Եւրոպա իրմով ըզբաղի՝ թէեւ եօթանասունը անցուցած ըլլար ան: Նոյն իսկ իր երկրին մէջ ուր Սալեան օրէնքը կը յարգուի, Հանրիթ ամբողջ կարեւորութիւնը կորսնցուց՝ իր մանչ զաւկին մեռած օրէն սկսեալ. անկէ առաջ՝ իբր մայրը ապագայ վեհապետին, նէ բաւական ազդեցութիւն ունէր:

Ասոր համար է որ պատմութիւն մը ունեցած չէ. և եթէ ունենար իսկ՝ իբր բաղդաւոր կին մը չէ որ հոն պիտի արձանագրուէր: Հանրիթ իր զաւակներուն մէջ փնտռելիք միւթարութեան տեղ սուգ ու վիշտ միայն գտաւ՝ կորսնցնելով տասը տարեկան մանչը և տեսնելով իր երկու աղջիկներուն անհնազանդութիւնը:

Սթէֆանի իշխանուհին դժուար ընտել բընաւորութեան տէր էր և մօրը հետ այնպէս մը գծտած որ հազիւ քանի մը անգամ իր ծննդավայրը տեսնելու եկաւ. մանաւանդ իր երկրորդ ամուսնութիւնը այնքան անհաճոյ եղաւ Հանրիթի ու ամուսինին որ Աւատրիոյ կայսրէն շատ աւելի խստութեամբ վարուեցան:

Լուիզ իշխանուհին որ՝ Սաքս-Գոպուրկ-կոթայի ընտանիքիէ մէջէն ընտրած է իր ամուսինը, շատ աւելի ազնիւ բնաւորութիւն մը ունէր, — բայց իր հայրն ու մայրը վանատան մը մէջ փակել տուին զինքը:

Մինակ կրտսեր աղջիկը Բլէմանթին, իր հօրը սիրականը կը մնայ. իր մօրը կողմէ խիստ դաստիարակութիւն մը ընդունած է: Մինչեւ 25 տարեկան եղած ատենն իսկ տըղայի մը տեղ դրած են զինքը. ահաւասիկ իր օրական ժամանակացոյցները չոր մայրը գծած է: Առտուան ժամը 6ին (Ը. Ե) արթննալ, Պատարագ, նախաճաշ, սերտողութիւն, պտոյտ, կէս օրուան ճաշ, դաշնակ, օտար լեզուներու դաս, գծագրութիւն, ճի հեծնելու մարզանք կամ պարի վաքժութիւն, պտոյտ, ընթրիք, երեկոյթ, եթէ ընտանեկան հաւաքոյթ մը չըլլայ կանուխ պառկել: Պարտ-

հանդէսներու մէջ իշխաններու կամ դեսպաններու հետ միայն կրնայ պարել: Դէմքով քիչ մը գեղեցիկ չէ բայց շատ բարի սիրտ մը ունի: Կրցած ժամանակը կ'երթայ Լուիզ քոյրը տեսնելու, իսկ պարապ ժամանակներուն կ'աշխատակցի Երիսաստուրդ Աղջիկը անուն թերթին:

* * *


Պելճիգայի Թագուհին, սեպտ. 19, ուրբաթ օր մեռաւ Սթաի մէջ, սրտի հիւանդութենէ:

Մարի-Հանրիէթ-Անն, Նարհիդ քսուհի Աւստրիոյ, ծնած էր 1836ին Բէշդայի մէջ: Յետինանտ Ա. Աւստրիոյ կայսեր թոռն էր, վեց ամսու չկար տակաւին որր մնաց և երբ տասնեւեօթը տարեկան եղաւ, ամուսնա-

ցուցին Լէոբոլտ Բ. ի հետ՝ այն ատենը Պրապանի դուքս:

Թագուհին բնականէն սէր մը ունենալով ծաղիկներուն համար Սթաի մէջ դղեակ մը կը քաշուէր ուր ահագին ջեռանոց մը զարդարուած էր: Իր հաճոյքներէն մին ալ ժողովուրդին ուրախութեան մասնակից ըլլալն էր: Ծնունդի օրերը 600է աւելի աղքատ աղաքներ կ'ընդունէր, կը հագուեցնէր, ճաշել կուտար և նուէրներով իրենց տունը կը շրկէր:

ԾԱՆՈԹ. — Եւրոպայի բոլոր վեհապետներուն եւ վեհապետուհիներուն լուսանկարները, ինչպէս նաեւ արքայական գերդաստաններոջ ընտանեկան կապիւրը տեսնելու համար, այս տարուան (1903) պատկերազարդ Տարեցոյցը ուզեցէք [զին 5 շրջ.]:



ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՊԵՏՔ ՈՒՆԻ ԹՈՉՈՒՆԻ

(Շաբ. 32րդ քիւն)

Միջատն ամէն կողմ կը բռնէ, պատելով ամէն տեսակ վտանգներու մէջ, ու ասոր համար է որ թռչունն ալ, ամէն կողմ է, միշտ թռչելով, միշտ երգելով, միշտ որսալով: Այս փոքրիկ, թեթեւ, իր նուրբ թաթիկներուն և իր գլխին սիրուն շարժականութիւնով օժտուած թռչունին, դուք կը կարծէք որ երկու կամ երեք ճանճերն իրեն



կը բաւեն: Խարկանք: Շատակեր մըն է ան: Իրեն պէտք է թրթուրներու, որդերու, ջորեակներու առատ ճաշ մը: Եւ իր հանած ձագերուն մտածած էք, ութը կամ տասը անյագ կտուցներ որոնք կը բացուին անոր — թռչունին — վերադարձին: Իրենց անօթութիւնը անցնելու ու իրենց մատղաշ թեւերուն ոյժ տալու համար է որ արեւծագէն մինչեւ մայրամուտք, իրիկուընէն մինչեւ արշալոյս, անդադար՝ առանց շնորհակալիք մը ընդունելու, արտերն ու դաշտերը, ծառին ճիւղին վրայ և տունկին տե-

րեւին տակ, ցորեններու և վարսակներու մէջտեղ, անտառին ճիւղ մէջտեղը, առուակներու եզերքները, մինչեւ երկիրին տակը, մշտնջենական պայքարը կը շարունակուի՝ միջատին ու թռչունին միջեւ:

Այգը կը ծագի: Իր լոյսը կ'արթնցնէ քնացող իրերն, կը լուսաւորէ անտառներն և կ'արթնցնէ տերեւներն ու ծաղիկներն՝ ցօղի շիթերով: «Յանկարծակի, կը գրէ Անտրէ Թէօրիէ, ճամբուն ցանկերը, մըրգաստանին ծաղկած սալորենիները, գետին դարափները, անտառին խորունկ կիրճը, ըսքանչելի համերգութիւն մը կը լեցնէ օդին հնչականութիւնը. այդ համերգութիւնն է՝ եկքանիկներուն խաղերուն կրկնութիւնը, վշտահաւերուն և երաշտահաւերուն ճռուղումները, յոսովին ծայնին թրթռացումներն»: Թռչնոց աշխարհը եռուզեռումի մէջ է: Իւրաքանչիւր բոյնէ երկիւջ մը կամաց կամաց իր ծայնը կը ձգէ, աչքը՝ շողշողուն, կտուցը՝ բաց և փետուրները՝ սարսռագին: Քունը պեղած է անոնց ստամոքսը ու միջատին որսն է կ'սկսի:

Արտոյտն է որ առաջին նշանը տուած է, երբ տակաւին միւսները կը ննջեն ու մացառներն լռիկ են: անիկա իր երգը կ'սկսի ու գործի գլուխ կ'անցնի: Հարիւրներով, վարսակի ու գարիի ակօսներէն դուրս, դէպ ի երկինք խոյանալին կը տեսնուի, կարճ ոլորապտոյտներու մէջ, վերէն վար, իրրթէ կ'ուզէին հոն տեղ միւրձիլ ասանց վերադարձի, կորսուիլ եթերին մէջ որ զառնք կը թաթաւէ ու կը գինովցնէ: Երկիրին համար, որքան բարձրանան, այնքան մեղմադձոտ կը դառնան: Երկինքին անհունութեան մէջ արդէն անոնք ուրիշ բան չեն բայց եթէ աննշմարելի կէտեր ու դեռ կը լսենք իրենց ականակիտ ուրախութեան երգը: Ասիկա, ըսած է բանաստեղծը, երկիրին ողջոյնն է զոր անոնք արեւին կը տանին: Անխոնջ աշխատողներ, անոնք հողագործին համար է՝ օգտակար օժանդակներն են: Մէկ քանի միջատներ որ կ'աւրին ցորենին արմատը կրնան կրծել մէկ քառորդը հունձքի մը. եթէ արտոյտն հոն չըլլար, հունձքերուն կորուստը անդարմանելի պիտի ըլլար: Իրաւունք չունի՞ ուրեմն ան՝ որ իր բոյնը հաստատած է ցորեններու մէջ՝ զորոնք աղէտքէն ազատած է:

Փոքրիկ կոչնական, մեծ ուտողներ: — Արժանի հատուցում մը: — Կտուցի հարուածներ, կացիների հարուածներ: — Պահապան մը տիպար անտառներու:

Մինչեւ իրինկուն, խայտիտները եկքանիկները, եզնակները երաշտահաւերը կարմրալանջերը, շիկագիները կանաչահաւերը ու շիկահաւերը մեզի համար զտուժի մեծ գործ մը կը կատարեն: Երբ քնանան անոնք, գլուխին թեւերնուն տակ, աւերը պիտի ունենան հազարներով ու հազարներով միջատներու: Իրենց ախորժակը անհաւատալի է: Երաշտահաւ մը մէկ օրուան մէջ կը կլլէ շուրջ 500 հաւիթներ ու թրթռուներ: Մ. Քուզ հաշուած է որ 300000 միջատ կը սպաննէր ան տարուան մէջ: Կանաչահաւ մը կը կլլէ հարիւրաւոր մը ջիւններ: Ծիտ մը կը ջարդէ փութանակի ջորեակներու գունդ մը: Սոխակն ալ ո՛չ նըւազ գօրաւոր ստամոքս ունի: Իրինկուններու հմայական բանաստեղծին, պէտք է հաստատուն սնունդ մը. փշրանքներ կամ պըտուղներ ուտելովը չէ՝ որ պիտի թրթռացնէ ամառ գիշերներուն իր եռանդոտ ու խանդավառ շարականը, իր խորին հեծեծանքները, իր փութակրկնոյթները, իր սարսռագին ծայն խաղցնելները:

Հապա՛ ֆիլօրեա՛ կը: Ահաւասիկ հատ մը որու համար անիրաւ ենք, Շա՛տ ճշմարիտ է թէ հալիքներուն համար չափազանց սէր մը՝ ունի, Ատոնց քամութէն գինովցած մաքուր ու թաշափափուկ երգ մը կը գեղգեղէ կեռասենիներուն մէջ, «ոսկիէ սրինգ» ի մը նման:

— «Ասիկա սոսկալի աւարառու մըն է, կ'ըսենք, մեր ֆիլօրեակը ծառ մը վերէն վար կը թալլէ ու միայն անոր կուտերը կը ձգէ:» Ո՛վ տէրեր որ միայն մեր ծառաներուն թերութիւնները կը նշմարենք փոխանակ իրեն վարձքերը վճարելու: Կը մոռնանք որ հինգ ամիսէ ի վեր է ֆիլօրեակը եռանդոտ կերպով ֆլաստակար միջատներուն ետեւէն ինկած է ու ահագին սպառում մը կ'ընէ ուտիճներու (նշանակեցէք որ ուտիճի մը գոյութիւնը մեզի 90 հատիկ ցորենի կորուստին պատճառ կ'ըլլայ): Աւելի՛ ետքը, մազեղ թրթռուներով ու ջորեակներով կը սնանի:

« Ճիւղբեակի ամուլ մը որ հազարաւոր հէքթարներով մրգաստանի մը մօտիկը հաստաթուած է, պիտի բաւէ պաշտպանելու հունձքը: »

Մարգագետինին մէջտեղէն, կ'անցնի տարմահաւը, անխոնջ կերպով հետապնդելով մարախը, որին կը լափէ ջրեակը ու յոպալը՝ բզէզը՝ Աղջկահաւը սեւ թափէ թեւերով որ աստառուած է ճերմակ սաղիւնով թիթեռի մը պէս կը թռչտի, մերթ երեսի վրայ, մերթ փորը օդին մէջ, Ան հոն է փետրվարէն ի վեր որ բերուած է հիւսիսի հովէն եւ վերնծայուած է պահպանութիւնին կանանչ ցորեններու և թաց դաշտերու: Ամբողջ հոն կ'որսայ: Երբ հանդիպի մէկին այն փոքրիկ հողի կոյտերէն, զոր ճճին կը թողու, զայն կը քրքրէ, թեթեւօրէն, մեղմօրէն, ծակը կը գտնէ, քովն աի հողին կը դարնէ և ուշադիր ու անշարժ աչքով կը կհնայ: Ճճին դուրս կ'ելլէ, յանկարծ բռնուած է կտուցի հարուածով մը: Եթէ որսը բաւական չհաւատ չեղաւ, աղջկահաւը գիշերն ալ կը շարունակէ զայն: Վազելով թրջած խոտերուն մէջէն, իր թաթիկներուն տակ կ'զգայ ճրճիները որոնք զովութիւնէն չեն կրնար փախչիլ ու կը բռնուին, անիկա պարարտ կերակուր մը կ'ընէ անոնցմով, յետոյ կ'երթայ լուալ առուէն կառուցն ու թաթիկները: Թրգմ. Վ. Յ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Փ Ո Ւ Ր Ի Ն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԿԻՋԱԼԷՆ ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ԾՐՆԵՐԸ

Հ Ի Ն Պ Ա Տ Մ Ո Ւ Փ Ի Ւ Ն

ԳԼՈՒԽ Թ.

ՈՒՆԱՍՏԱՆ. — ՆԱԽՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՓԻԼԻՊՊՈՍ ԵՒ ԱՂԷՔՍԱՆԴՐ (359 323)

Փիլիպպոս (359): — Այն երկիրը, որ Մեծին Աղեքսանդրի ծննդավայրն եղած է, մինչեւ անոր հօր՝ Փիլիպպոսի ատեն, պատմական նշանակութեան արժանի դեր մը չի կատարեց: Փիլիպպոս

Թէրէ պատանդ տարուելով Թէրացի Եպամինոնդ նշանաւոր ռազմագէտ զօրավարին քով ուսաւ ճամբար (բանակ) յարդարելու և կառավարելու գիտութիւնն ու արուեստը: Իշխանութեան հասնելէն յետոյ՝ երկու տարուան մէջ երկիրը մաքրեց խռժուղութեամբ, և կազմակերպեց անոր զարգացման հարկաւոր ուժերը: Յունական գաղութներ եզէական ծովուն ուղին անոր առջեւ կը փակէին, անոնց մէջ ամենէ աւելի զօրեղագոյն եղած Օլինթեան կը գրաւէ, կ'հպատակեցնէ Նեսդոսի և Դրիմոնի մէջտեղ եղած երկիրը, ուր կը գտնէ նաւատորմի շինութեան յատուկ անտառներ եւ զօրաց ու Հոետորաց վարձուց հատուցման բաւարար դրամ հայթայթող Պանգէոս լերան ոսկեհանքերը: Նկատելով որ Թեսալիան կ'զոցէ իր առջեւ Յունաստանը, Դելբեան տաճարին սրբապիղծ Փոկեացիներուն դէմ կրօնքը պաշտպանելու պատրուակեալ ձեւին տակ կը միջամտէ սոյն երկրին ներքին գործերուն բարեկամօրէն (355), և Թեսալիացիք իրենց դից պաշտպան հանդիսացողին առջեւ կը բանալ իրենց երեք քաղաքները. ասոնց շնորհիւ Փիլիպպոս ձեռք կը դնէ Թէրմոպիլէի վրայ որոնց հսկողութիւնը յանձնուած էր Աթէնացիներուն:

ԴԵՄՈՍԹԷՆ. — Աթենացի այս մեծանուն ճարտասանը Փիլիպպոսի փառամոլական ծրագիրներն ի վեր կը հանէր միշտ անվեհեր ու անվհատ կերպով: Իր Փիլիպեանք կոչուած նշանաւոր ճառերն անբաւական եղան Օլինթիան փրկել, զոր Փիլիպպոս գրաւեց (348): Դէմոսթէն ուր ուրեմն խորհուրդ տուաւ իր հայրենակցաց խաղաղութեան դաշինքով ալ իրենց երկրին վրէժաւարեք առաջխաղացմանց մէջ կասեցնել խորամանկ Փիլիպպոսը, որ նենգաւատիք բանակցութիւններով Աթենացիները խաղցուց եւ Թէրմոպիլէի անցքը ձեռք անցուց զանոնք յանկարծակիի բերելով (346):

ԴԵՐՈՆԷՒ ԺԱԿԱՏԱՄԱՐՏԸ. — Թէրմոպիլէի անցքին գրաւումով կեդրոնական Յունաստանը Փիլիպպոսի առջեւ բաց դուռ եղած էր: Խել մը անխելքներ Մեհենական նոր կռիւ մը բացին հոն, և իրաւունք չահելու համար, իրենց օգնութեան կոչեցին Փիլիպպոսը որ իր փաղանդով կը վազէ կը

կ'գրաւէ էլատիան: Դէմոսթէն անմիջապէս կ'փայլատակէ, և իր պերճախօս ճարտասանութեամբ կ'համոզէ Աթենացիներն ու Թէբացիները որք միանալով գերագոյն ճիգ մը թափեն Փիլիպպոսի յաղթական յարձակումն արգելելու համար, սակայն Հելլենական իշխանութիւնը կ'միանար Քերսնէի մէջ (338): Փիլիպպոս (Ագեսիդասի արշաւանքը պիտի վերսկսէր ընդդէմ Պարսից երբ մեռաւ: Թէբացիք այս մեծ լուրն իմանալուն պէս, յանկարծակի կ'յարձակին (336): Փիլիպպոսի պահակներուն դէմ ու



Մեծն Աղեքսանդր

զանոնք կ'փշրեն: Փիլիպպոսի որդին ու յաջորդը, Մեծն Աղեքսանդր, 13 օրուան մէջ՝ Դանուբի ափունքէն կ'հասնի, կ'առնէ Թէբէն, անոր բնակչաց վեց հազարը կ'ըսպանէ, 30,000ը կ'ծախէ, և Կորնթոսի մէջ պարսկական արշաւանքին համար, ինքզինք Հելլեններուն հրամանատար ընտրել կուտայ:

Աղէքսանդրի ԱՐՇԱԽԱՆՔՆ Ի ՊԱՐՈՍ (334-323) — Աղէքսանդր (334) կ'անցնի Հելլենսպոնտոսը 30,000 հետեակազօրքով

և 4,500 այր ու ձիով կ'փշրէ Կրանիգի մօտ 110,000 Պարսիկները, Իսոսի մէջ Դարեհին կ'յաղթէ (339), կ'առնէ Տիւրոսը, Եգիպտոսը կ'նուաճէ և հոն կ'հիմնէ Աղէքսանդրիան: Աղէքսանդր իր այս կայծակնահար յաղթանակներով խլած էր Դարեհի ձեռքէն այն ամէն միջոցները որոցմով ան կրնար Հելլադաի մէջ իր յաղթական ընթացքն արգելիլ ընդվզումներ յարուցանել: Ուստի ապահովօրէն կ'հալածէ Դարեհը, կ'հասնի անոր ետեւէն Արբէլաի մէջ, ուր կ'պարտէ զայն (331): Կ'գրաւէ անոր բոլոր ոստանները, Բաբելոնը, Շօղը, Բասարկադը, Պերսպոլիսը զոր կ'այրէ, Եկրատանը՝ ուր չի յաջողիր ձերբակալել Դարեհը որ, Աղէքսանդրի ձեռքը գերի չիյնալու վախով ու շտապով փախած ատենկը մեռնի:

Դարեհի հակապարզներէն մին՝ Բէսոս կ'փորձէ Բանկտրիաի մէջ Աղէքսանդրին դիմակալել բայց յաղթուելով կ'վանուի Օքսոս գետէն անդին՝ վերջէն բռնուելով կը յանձնուի Աղէքսանդրի որ զայն կ'մեռցնէ յետոյ՝ Դարեհի վրայ ձեռք վերցուցած ըլլալուն ժպրհութիւնը պատժելու համար:

Դարեհի տիրապետած այս ընդարձակ աշխարհներուն նուաճումը կ'աւարտի Պարսիկ իշխանուհի Դոքսանէին հետ յաղթականին ամուսնալուծութեամբը: Մեծն Աղէքսանդր արդէն այնքան ընդարձակած աւալ իշխանութեան մը հետ միացնելու համար Հնդկաստան ալ անցաւ մինչև Ինդոս գետը: Բայց իր զօրքերն արդէն յոգնած եւ ուժասպառ եղած լինելով զանց ըրաւ մինչեւ Գանգէսի հովիտը երթալ գրաւելու համար, ուստի ստիպուեցաւ ետ դառնալ: Ինդոսէն մինչեւ ովկէանոս իջաւ և ցամաքի ճամբով վերադարձաւ Բաբելոն, միևնոյն ատեն իր Նէարգոս ծովակալն ովկէանոսի ճամբով կ'հասնէր Պարսից ծովածոցը:

Աղէքսանդր իրրեւ յաղթական՝ շատ իմաստուն քաղաքականութիւն մը բանեցուց յաղթեալներուն հետ: անոնց աստուծոյ զոհ մասուցանելով: Երգելով անոնց սովորութիւնները, ամէն ճիգ թափելով յաղթեալներն ու յաղթողներն իրարու հետ ամուսնութեամբ միացնելու համար, մահը վրայ հասնելով (323 Ապրիլ 21) Բաբելոնի մէջ կանկ առին աշխարհակալական իր միւս

բոլոր մեծամեծ ծրագիրները: Աղէքսանդր երեսուն և երկու տարեկան էր երբ մեռաւ:

Յունաստանի պատմական այս շրջանին մէջ արուեստը տակաւին ծաղկեալ վիճակի մէջ է, Յոյն քանդակագործաց մէջ գերազանց շնորհալին՝ Պրաքսիդեկէսը, և Ապելլէսի վարպետն եղող Պամփիլիոս նրկարիչը յաջորդած էին Փիգիասի, Պոլիկլէդէսի, Դեւքսիսի. այսու ամենայնիւ ճաշակն արդէն նուազ լուրջ է: Պերճախօսութիւնն իր կորովին մէջ կ'գտնենք. Աթէնքի բեմը կը թնդայ Դէմոթենէսի, Լիկուրկուի Իռէրիտէսի, Էսքինէսի, Էկէսիրքոսի, առաքինի Փոկլիտի ու առնական չեչտերով. փիլիսոփայութիւնը իր ամենէ մեծ վարպետներն ունի, Սոկրատայ աշակերտը՝ Պլատոն որ կը վարդապետէր Ակադեմոսի պարտիզաց մէջ (429-347). Պլատոնի աշակերտ և Աղէքսանդրի վարժապետ Արիստոտէլը (384-322) որ ուզեց ճանշնալ ու հետամուտ եղաւ գիտնալ ամէն բան, մարդկային իմացականութեան և բնութեան բոլոր օրէնքները: Փիլիսոփայութիւնը մինչեւ այսօր կը հետեւի այն կրկնակ շաւղին զոր գծեցին այս երկու հզոր միտքերը:

ՊՍՎԾ ԲԶԵԶԸ

(Շարունակութիւն 32րդ թիւէն)

Նաւակով մը անցանք փոքրիկ ծոցէն կղզիին ծայրը, մագլցելով ընդդիմակալ եղերքի լեռնուտ հողերուն վրայ, ուղղութեանք դէպի հիւսիսային արեւմուտք, վայրի եւ անապատ երկրի մը մէջ՝ ուր երբէք չը տեսնուիր մարդկային ոտքի հետք մը: Լըկրէնտ առջեւէն կը քալէր, ճամբան բանալով հաստատամտութեամբ: Ժամանակ ժամանակ միայնակ կը կանգնէր փնտռելու համար իր շինած քանի մը ոտները՝ զոր թողուցած էր հոն՝ առջի արշաւանքին մէջ:

Այսպէս քալեցինք գրեթէ երկու ժամ, եւ արեւը ճիշդ մարը պիտի մտնէր, երբ մտանք երկիր մը՝ որ մինչեւ այն ատեն տեսածէս աւելի տխուր երեւոյթ մը ունէր: Ասիկա տեսակ մը սարահարթ էր, գրեթէ անմատչելի լեռի մը գագաթին մօտ, ստո-

րոտէն մինչեւ գագաթը անտառախիտ, և ուր ցանուած էին ահագին քարի կոյտեր, որ հողին վրայ ցրուած կը թուէին, եւ յարմար պարագաներու տակ պիտի գլորէին ստորին հովիտներու մէջ, եթէ արգիլուած չըլլային այն ծառերէն, որոնց կը կրթնէին: Խորունկ հեղեղատներ կը ճառագայթէին տարբեր ուղղութիւններով, եւ տեսարանին կուտային աւելի նսեմ չքեղութեան մը նըկարագիրը:

Այն բնական հողաբլուրը, որուն վրայ բարձրացած էինք, այնպէս գոցուած էր փուլերով որ ընդհուպ տեսանք թէ մեզի անկարելի պիտի ըլլար ճամբայ ջարդել առանց մանգաղի: Ժիւբիդէր իր տիրոջ հրամանին վրայ սկսաւ արահետ մը բանալ մինչեւ հսկայ կակաչենիի (tulipier) մը քովը, որ կը տնկուէր հոն, ութ կամ տասը կաղնիներու հետ, եւ զանոնք ամէնքը կը գերազանցէր, ինչպէս նաեւ միւս բոլոր ծառերը, զոր մինչեւ այն ատեն երբէք տեսած չէի, իր տերեւներուն գեղեցկութիւնովը եւ իր ձեւովը, իր ճիւղերուն անհուն ընդարձակութիւնովը և իր տեսքին ընդհանուր վեհութիւնովը: Երբ հասանք այս ծառին, Լըկրէնտ դարձաւ ժիւբիդէրի և հարցուց թէ կրնա՞ր անոր վրայ ելլել: Խեղճ ծերունին քիչ մը վախցած երեւցաւ այս հարցումէն, եւ քանի մը վայրկեան առանց պատասխանի կեցաւ: Վերջապէս մօտեցաւ ահագին բունին, յամրօրէն անոր շրջանը ըրաւ, եւ զանի քննեց մանրակրկիտ ուշադրութիւնով մը: Երբ վերջացուց իր զննութիւնը, ըսաւ պարզապէս:

— Այո՛, Մասսա, ժիւբ ելլել բոլոր ծառերը զոր ինք երբէք ունենալ տեսած իր կեանքին մէջ:

— Ուրեմն ելի՛ր, երթա՛նք, երթա՛նք, մի՛ դանդաղիր, որովհետեւ ընդհուպ պիտի մթնայ և չպիտի կարենանք տեսնել ըրածնիս:

— Մինչեւ ո՞ւր պարտիլ ես ելլել, Մասսա՛, հարցուց ժիւբիդէր:

— Նախ մագլցէ բունին վրայ, և ապա քեզի պիտի ըսեմ թէ ի՞նչ ճամբու պիտի հետեւիս: Ա՛հ, վայրկեան մը, այս բզէզը հետդ առ:

— Փսէզը, Մասս Ուիլ, ոսկիէ փսէզը՛,

պօռաց խափշիկը, դարհուրանքէն ետ երթալով: Ինչո՞ւ ես պարտիլ հետս կրել փրսէզը, ծառին վրայ. ես աւելի լաւ համարել դժոխապարտ ըլլալ:

— Եթէ կը վախնաք ժիւր, դո՛ւք մեծ խափշիկ մը խոշոր եւ ուժեղ, կպչելու փոքր միջատի մը մեռած եւ անփնաս, է՛հ, լա՛ւ, դուք կրնաք զանիկա կրել այս լարովը, բայց եթէ զանիկա չտանիք այս կամ այն կերպով՝ պիտի ստիպուի՝ անգթափար կտրել գլուխդ այս բահովը:

— Է՛հ, լա՛ւ, ի՞նչ, Մասսա՛, ըսաւ ժիւր, որ յայտնապէս աւելի հաճոյակատար եղաւ ամօթէն, Մասսա միշտ փնտռել կուի ծեր խափշիկին հետ: Ես ուզել կատակաբանել: Ահաւասիկ ամէնը: Ես վախ ունենալ փսեղէն: Ես ոչ բռնել երբեք փսեղէն:

Ասոր վրայ զգուշութիւնով բռնեց ճիշտ լարին ծայրէն, եւ այսպէս պարագաներուն ներածին չափ իր անձէն հեռի բռնած միջատը, պատրաստուեցաւ ծառին վրայ մագլցելու:

Կակաչենին կամ Լիթօսէնսօլի քիւլի բեֆեալը, Ամերիկեան անտառներու ամէնէն չքեղ ծառը, իր երիտասարդութեան ատեն եղականապէս ողորկ բուն մը ունի եւ շատ կը բարձրանայ առանց կողմնական ճիւղերու, բայց երբ իր հասունութեան կը հասնի իր կեղեւը խորտուրորտ և անհաւասար կ'ըլլայ, եւ փոքր բազմաթիւ ոտներ կ'երեւին իր բունին վրայ: Այսպէս սանդուխդ արդի վիճակին մէջ երեւութապէս աւելի դժուարին էր քան իրապէս: Կարելի եղածին չափ ամուր մը պրկելով հակայ գլանը իր բազուկներով եւ ծունկերով, քանի մը բողբոջները ձեռքով բռնելով, իր մերկ ականջները ուրիշներու վրայ կը թնցնելով, ժիւրիդէր երկու երեք անգամ վար իջնելէ վերջ, կամաց կամաց բարձրացաւ մինչեւ առաջին մեծ երկձիւղը (fourche) և այն ատեն այնպէս համարեց թէ աշխատութիւնը լնացած էր: Արդարեւ ձեռնարկին գլխաւոր վտանգը անցած էր, թէև վերելովը գետինէն վաթսուն կամ եօթանասուն ոտք բարձրը կը գտնուէր:

— Ո՞ր կողմէ ես պարտիլ հիմա երթալ, Մասսա Ուիլլ, հարցուց անիկա:

— Միշտ այս կողմի մեծ ճիւղին հետեւէ, ըսաւ Լըկրէնտ:

Խափշիկը փութաց հնազանդիլ, երեւութապէս առանց շատ յոգնութեան ելաւ, միշտ աւելի բարձրը ելաւ, մինչեւ որ վերջապէս, կծկուած ու վայրահակ, բոլորովին անյայտացաւ խիտ տերեւներուն մէջ: Այն ատեն իր ձայնը լսուեցաւ իբրեւ հեռաւոր կոչում մը: Կը պօռար:

— Ես ոչ գիտնալ թէ ո՞ւր պարտիլ ելել տակաւին:

— Որչա՞փ բարձրը կը գտնուիս, հարցուց Լըկրէնտ:

— Ես շատ բարձր, շատ բարձր, յարեց խափշիկը: Ես ոչ կարենալ տեսնել երկինքը ծառին ծածկոյթին մէջէն:

— Երկինքով մի՛ գբաղիր, այլ ուշադրութիւն ըրէ ինչ որ կ'ըսես՝ քեզի: Գլուխդ կախէ դիտելով բունը, եւ համրէ թէ քննէ վար քանի՞ ճիւղ կայ այս կողմէն: Քանի՞ ճիւղերէ անցած ես:

— Մէկ, երկու, երեք, չորս, հինգ, եւ արդէն անցած հինգ խոշոր ճիւղեր, Մասսա՛, այս կողմէն:

Քանի մը ըտպէ ետք ձայնը նորէն լսուեցաւ: Խափշիկը կը յայտարարէր թէ եօթերորդ ճիւղը հասած էր:

— Հիմա ժիւր, աղաղակեց Լըկրէնտ, յայտնի յուզումի մը ենթակայ — այս ճիւղին վրայ պիտի ջանաս կրցածիդ չափ յառաջ երթալ: Եթէ տարօրինակ բան մը տեսնես, ինծի պիտի իմացնես:

Այս վայրկեանին կատարեւապէս անհետացաւ այն՝ քիչ մը կասկածը զոր տակաւին պահած էր խեղճ բարեկամիս խելագարութեանը նկատմամբ: Ա՛յ չէի տարակուսեր, անտարափոյս մտային յիմարութեան հասած էր ան, և ես սկսայ լրջօրէն զանի հիւղակ դարձնելու փորձել: Մինչ կը մտածէի ընելիք լաւագոյն որոշումիս վրայ, ժիւրիդէրի ձայնը նորէն լսուեցաւ:

— Ես շատ վախնալ այս ճիւղին վրայ աւելի հեռու երթալու: Այս ճիւղը ամբողջովին ըլլալ մեռած:

— Կ'ըսես որ ասիկա մեռած ճիւղ մըն է, ժիւրիդէ՛ր, աղաղակեց Լըկրէնտ դողդոջուն ձայնով մը:

— Այո՛, Մասսա՛, ան մեռած դուռի գամի մը սլէս, անշուշտ կորսուած, բոլորովին առանց կեանքի:

— Յանուն երկնից, ի՞նչ ընել, հարցուց

Լըկրէնտ, յայտնապէս յուսահատած :

— Ի՞նչ ընել, ըսի, երջանիկ ըլլալով որ առիթ մը գտայ խօսելու : Է՛հ, հիւղակ դառնալ և երթալ պառկիլ : Երթա՛նք, եկէ՛ք : Ողջամիտ եղէք, բարեկամս : Ժամանակը ուշ է, և ապա յիշեցէք ձեր խոստումը :

— Ժիւրիդէ՛ր աղաղակեց առանց ինձմով գրադելու, կը լսե՞ս զիս :

— Այո՛, Մասսա Ուիլլ, ես ձեզ լսել խիստ որոշակի :

— Զմեկիովդ աղէկ մը փորձէ փայտը, թէ աղէկ մը փտած է :

— Անիկա փտած, Մասսա՛, ապահովաբար փտած, յարեց խափշիկը, քանի՜ մը վայրկեան լռութենէ ետք, բայց խորովին փտած չէ : Ես քիչ մը կարենալ յառաջանալ ճիւղին վրայ, անշուշտ, բայց միայն ես :

— Միայն դո՛ւն, ի՞նչ ըսել կ'ուզես :

— Ես ուզել ըսել առանց փսէզին : Ինքը չատ ծանր, փսէզը : Եթէ զանի ես թող տալ, ճիւղը ոչ կ'ոտրել միակ խափշիկի մը բեռին տակ :

— Անպիտան ստահակ, աղաղակեց Լըկրէնտ, որ այնպէս կը թուէր թէ անսովոր կերպով մեղմացաւ : Ի՞նչ անբանութիւն կը պատմեն ինծի : Եթէ թողուս միջատը որ իյնայ, քու վիզդ կը խածնեմ : Հօլա՛. Ժիւրիդէ՛ր, զիս կը լսե՞ս :

— Այո՛, Մասսա՛ : Դուք ոչ պէտք պունալ այսպէս խեղճ խափշիկին :

— Է՛հ, լա՛ւ, մտիկ րէ՛ ուրեմն, եթէ կ'ուզես ինքզինքդ վտանգի մէջ դնելով յառաջ երթալ ճիւղին վրայ, կրցածիդ չափ հեռու առանց վտանգի եւ միջատը թող տալու, քեզի պիտի նուիրեմ արծաթ տուր մը, երբոր վար իջնաս :

— Ես երթալ խօսոյն, Մասսա Ուիլլ, ես մեկնած յարեց խափշիկը ածապարելով : Ես հիմա գրեթէ ծայրը :

— Մայրը՛, աղաղակեց Լըկրէնտ յաղթական շեշտով մը : Կ'ըսես որ այս ճիւղին ծայրն ես :

— Ընդհուպ ծայրը, Մասսա՛ : Օ՛հ, օհ-օ-օ-օ-օ-օ՛հ, Տէ՛ր Աստուած : Ողորմած Աստուած. հո՛ն, հո՛ն, ծառին վրան :

— Է՛հ, լա՛ւ, աղաղակեց Լըկրէնտ ուրախալից : Ի՞նչ կայ հոն :

— Պահ, ոչինչ, գանկ մը : Մէկը ունե-

նալ մոռցած իր գլուխը ծառին վրայ, եւ ագռաւները ուսել բոլոր միտը :

— Գա՛նկ մը կ'ըսես : Շատ լաւ, ի՞նչ պէս կցուած է ճիւղին, ի՞նչ է զանիկա բրնձողը :

— Ի՞նչ է զանիկա բռնողը : Ես ոչ գիտնալ, Սպասեցէք, Օհ. խիստ հետաքրքրաշարժ պարագայ, կ'երդնում : Ես տեսնել մէկ մեծ գամ գանկին մէջ, եւ անիկա բրնձող գանկը ծառին վրայ :

— Լա՛ւ, հիմա Ժիւրիդէ՛ր, ճշդիւ ըրէ՛ ինչ որ կ'ըսեմ քեզի, կը լսե՞ս զիս :

— Այո՛, Մասսա՛ :

— Ուրեմն ուշադրութիւն ըրէ : Գանկին ձախ աչքը գտիր :

— Հը՛մ, օհ-օ-օ-օհ ի՞նչստ գուարճալի : Ինք ոչ ունենալ բնաւ ձախ աչք :

— Սատանան տանի ապուշութիւնդ : Կրնա՞ս զատել աջ ձեռքդ ձախ ձեռքէդ :

— Այո՛, ես գիտնալ... գիտնալ այս ամէնը... Ես ձեռքել փայտը ձախ ձեռքորս :

— Անշուշտ, որովհետեւ դու ձախիկ ես : Եւ քու ձախ աչքդ քու ձախ ձեռքիդ կողմէն է : Հիմա, պիտի կարենա՞ս գտնել գանկին ձախ աչքը. կամ թէ ո՛ր էր ձախ աչքը. գտա՞ր :

Երկար ատեն լռութիւն տիրեց : Վերջապէս խափշիկը հարցուց :

— Դուք ըսել ինծի գտնել գանկին ձախ աչքը, գանկին ձեռքին ձախ կողմը՞ : Դուք ընել սխալ, Գանկը ոչ ունենալ երբէք ձեռքեր... : Կարեւոր չէ ատիկա, ես գտնել ձախ աչքը : — Ա՛հ, ահաւասիկ ձախ աչքը : Ես ոչ գիտնալ ի՞նչ պարտիլ ընել ձախ աչքով :

— Թելին ներածին չափ բզէզը վար իջեցուր. բայց ուշադրութիւն ըրէ որ թելին ծայրը թող չիտաս :

— Ահաւասիկ, Մասսա Ուիլլ, Ոչ դրժուար ինծի համար փսէզը վար իջեցնել ձախին մէջէն : Բռնեցէ՛ք, բռնեցէ՛ք, ինք իջնալ :

Այս ամբողջ խօսակցութեան միջոցին, Ժիւրիդէրի մարմինն ոչ մէկ մասը կրնայի նշմարել, բայց միջատը զոր նա յամբօրէն վար կը կախէր հիմա կ'երեւար թելին ծայրը եւ կը փայլէր իրեւ սակիէ գնդակ մը՝ որ մարը մտնող արեւին վերջին ճառա-

գայթերէն կը փայլի, որոնցմէ մէկ քանիները տակաւին տկարօրէն կը լուսաւորէին այն բարձրաւանդակը՝ ուր կը գտնուէինք: Միջատը վար կ'իջնար ճիւղերը վերցնելով, եւ եթէ խափշիկը զանի ձգէր իյնալու այս վայրկեանին, մեր ոտքերուն քով պիտի խնար: Լըկրէնտ անմիջապէս առաւ մանգաղը եւ երեք կամ չորս մէթր տրամագիծ ունեցող շրջանակ մը գծեց, ճիշդ միջատին տակը, եւ երբ ասիկա բրաւ հրամայեց ժիւրիտէրի որ թողու չուանը, եւ ծառէն վար իջնայ:

Մեծ խնամքով սեպ մը խոթեց հողին մէջ, ճիշդ այն տեղը՝ ուր պատենաթեւը ինկած էր, եւ այն ատեն բարեկամս գըրպանէն հանեց չափելու համար ժապաւէն մը: Անոր մէկ ծայրը կապեց ծառին բունին այն մասին՝ որ սեպին ամէնէն աւելի մօտ էր, եւ զանիկա երկարեց մինչեւ սեպը, ապա շարունակեց զանի երկարել այն միւսնոյն ուղղութիւնով՝ զոր կուտային այս երկու կէտերը, սեպը եւ բունը — մինչեւ յիսուն ոտք հեռաւորութիւնով — մինչ ժիւրիտէր հողին վրայի փուշերը կը վերցնէր մանգաղով: Այսպէս գտնուած տեղը երկրորդ սեպ մըն ալ խոթեց, եւ ասիկա կեդրոն առնելով գծեց շրջանակ մը որ գրեթէ չորս ոտք տրամագիծ ունէր: Իսկոյն առաւ բահ մը, մէկ հատ մը ժիւրիտէրին եւ ուրիշ մըն ալ ինծի տալով մեզի աղաղակեց որ փորենք կարելի եղածին չափ աշխուժով:

Ճշմարիտը ըսելով, շատ չէի ախորժեք այսպիսի գոսանքէ մը, եւ ներկայ պարագային մէջ անկէ յօժարակամ պիտի ետ կենայի, որովհետեւ գիշերը կը յառաջանար եւ ես ըրած աշխատութենէս ինքզինքս բաւական յոգնած կ'ըզգայի, բայց անկէ ազատելու համար ու եւ է միջոց մը չէի գտներ, եւ կը վախճայի որ մերժումով մը չը վրդովէի խեղճ բարեկամիս զուարթութիւնը: Եթէ ժիւրիտէրի օգնութեան վրայ կարենայի վստահիլ, չպիտի վարանէի բռնութեամբ համարձակ կերպով յիմարին գլուխը տեղը բերել: Բայց ազէկ կը ճանչնայի ծեր խափշիկին նկարագիրը: Եւ չէի կրնար համարձակիլ անոր օգնութիւնը յուսալ, այն պարագային մէջ՝ ուր պիտի պարտաւորուէի անձնական կռիւ մը ընել իր տիրոջ հետ: Չէի տարակուսէր որ ասոր միտքին փչած

էր թաղուած գանձերու նկատմամբ պայտալ գաղափար մը, եւ թէ հաստատուած կը կարծէր իր երեւակայութիւնը, բզէզը դրոշմուած ըլլալով, կամ կարելի է նոյն իսկ ժիւրիտէրի յամաւելովը, բզէզին իրական ոսկիէ ըլլալուն նկատմամբ: Յիմարութեան հակամէտ միտք մը դիւրութեամբ կրնար նմանօրինակ թելադրութիւններէ մղուիլ, մանաւանդ երբ անոնք կապակցութիւն ունին իր նախընկալ սիրելի գաղափարներուն հետ: ապա կը յիշէի խեղճ տղուն խօսքը, երբ ըսած էր թէ բզէզը « իր բաղդին նշանն էր »: Վերջապէս շատ գէշ կերպով տաղանապած ու վարանած էի: Բայց ամէնէն ետքը որոշեցի անդրդուելի մնալ եւ իմ կամքովս փորել, յաղթելու համար իմ ցնորամիտիս՝ կարելի եղածին չափ շուտ իր երազներուն պարագլութիւնը ցուցնող ապացոյցով մը:


Լապտերները վառելով գործի սկսանք, աւելի բանաւոր պատճառի մը արժանի եւ ռանդով: Երկու ժամ փորեցինք աշխուժիւ ու անդադար: Բառ մը չխօսեցանք մինչ որ մեզի աւելի վարանում կուտար, հաջումներն էին շունին որ խիստ կը գրգռուէր մեր աշխատութիւններէն: Վերջապէս այնչափ անհանդարտ եղաւ որ վախցանք թէ անիկա չարթնցնէ մօտը գտնուող քանի մը գողերը — կամ մանաւանդ ասիկա Լըկրէնտի վախն էր: Վասն զի ինծի համար ուրախութիւն մըն էր այն խափանումը, որ ինծի թող պիտի տար որ իմ շրջագայիկն հիւղ տանիմ: Վերջապէս ժիւրիտէր կատաղաբար ծակէն դուրս նետուելով անվախ դէմքով մը կենդանիին կոկորդը ցուկակապեց իր փոկերէն մէկովը եւ դարձաւ իր գործին ծանրօրէն՝ խնդալով իր կրկնոցին տակ:

Ցուցուցած ժամանակէն ետք, հինգ ոտք խորութեան հասած էինք, եւ մինչեւ այդ ատեն որ եւ է գանձի իր նշանը չէր յայտնուած: Ընդհանուր դադար մը ըրինք, եւ ես սկսայ յուսալ որ զաւեշտին վերջը եկած էր: Սակայն Լըկրէնտ, թէեւ յայտնապէս խիստ շփոթած, ճակատը սրբեց մտածկոտ դէմքով մը եւ գործի սկսաւ: Բացած էինք ծակ մը՝ որ չորս ոտք տրամագիծ ունեցող շրջանակին տարածութիւնը կը բռնէր. այս սահմանէն քիչ մը անդին ալ փորեցինք, տալիսին երկու ոտք հող վերցուցինք. միշտ

ոչինչ: Ոսկեխոյզը, որուն վրայ լըջօրէն գըթացած էին վերջապէս փոսէն դուրս ելաւ: Իր գէմքին վրայ գրողմուած ամէնադառն յուսահատութիւնով մը, եւ յամբօրէն հագաւ իր զգեստը զոր հանած էր վրայէն: Թողուցի որ ընէ: Ժիւրիդէր իր տիրոջ մէկ նշանին վրայ ժողովեց գործիքները, եւ շունին կապը քակելէն ետք, խոր լսութեամբ հիւղակին ճամբան բռնեց:

Թարգմ. ԱՇՈՏ Յ. ՊԱՋՊՋԵԱՆ

(Շարունակելի)



ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Անցեալ երկուշարթի օր, Սկիւտարի Ս. Կա. բաղեստ Եկեղեցիին մէջ վայելուչ հանդէսով մը կատարուեցաւ Թէոդիկ էֆ. Լապճիհեանի պսակաւորութիւնը Օր. Արշակունի Պ. Ժէզվէճեանի հետ, կնքահայրութեամբ Մանգուսի տէր եւ տնօրէն Յովհաննէս էֆ. Գայաէրեանի:

Ոոյն հարսանեկան հանդէսը, կրնանք կոչել «Հարսնիք մը գրական-լրագրական աշխարհին», որովհետեւ հարսնեւորներուն մէջ կը նշմարուէին շատ մը հրաշքեր: Գրական ու լրագրական դասէն, և փեսան՝ Թէոդիկ էֆ. մեր ամենէն ժողովրդական գրողներէն մին ըլլալով, ու հարսը՝ քիչ տեսնէ ի վեր ծանօթ էր Օր. Ժ. Ա. ըստորագրութեամբը, զոր մեծ հաճոյքով կը տեսնենք անգլ. ընտրելագոյն գրութեանքներու թարգմանութեանց ներքեւ Մանգուսի մէջ:

Մեր ջերմագին շնորհաւորութիւնները կ'ուղղենք մեր Մեծ. բարեկամին և ամուսնոյն, մեր մօրեղբորդուն դստեր, որոնք այնքան գեղեցիկ միութիւն մը կը կազմեն թէ՛ իրրեւ գրչի երկու վաստակաւորներ և թէ՛ իրենց երիտասարդութեամբն և թէ՛ ազնիւ ձիրքերովը:

Ն. Կ. Պ.



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԵՒ

ՍՈՍՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆՍ

Մեր ընթերցողները անշուշտ գոհ պիտի մնան երբ իմացնենք իրենց թէ՛ ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆՍԻ հեղինակ Ս. Չէօվէկճեան էֆ. (Ժիրայր Շիրակացի) իր աշխատակցութիւնը նուիրելով Հանրագիտակի, ասկէ ետքը կարող պիտի ըլլանք իւրաքանչիւր ամսովերջի թիւը յատկացնել մի միայն վաճառականական գիտելիքներու, ընդգրկելով բոլոր այն նիւթերը որոք Չէօվէկճեան էֆ. ասկէ առաջ վարած Առաջնորդ Վաճառականացի իրական զարդն ու արժանիքը կը կազմէին:

Հանրագիտակի բաժանորդները մի միայն ՅԾ զրշ. վճարելով թէ՛ Մանկավարժական թերթին եւ թէ՛ Առաջնորդ Վաճառականացի բաժանորդ պիտի ըլլան: Իսկ անոնք որ կը փափաքին Վաճառականներու թերթին միւնակ ունենալ, 12 զրշ. փոխարէն պիտի ընդունին առանց թղթատարի աւելորդ ծախքի տարուան մէջ հրատարակուած 12 պրակները:

Հանրագիտակ Մանկավարժական թերթը պիտի ունենայ տոնուազն 18 էջ, իսկ Վաճառականներու յատկացեալ թիւն առնուազն 24 էջ:

ԼՈՅՍ ՏԵՍԱԾ Է

Սիրուած բանաստեղծ Արտաշէս Յարութիւնեանի բանաստեղծութիւններուն մէկ հաւաքածոն՝

Լ Բ Ո Ւ Ա Մ Ք Ն Ա Ր Ը

Նուիրուած բանաստեղծին լուսաղբօր

ԹԼԿԱՏԻՆՑԻՆ

Գողարիկ ու ճաշակաւոր հատոր մը, որ կը խտացնէ 54 ոտանաւորներ, ամէնքն ալ իրարմէ գեղեցիկ և տողուած ճամարտապէս բանաստեղծական աւելնով մը:

ԽՄԲԱԴՐԱՊԵՏ — ԱՐՏՕՆԱՏԻՐ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Պապը Ալի ճատտէսի, Թիւ 38, Իգտամ լրագրին դէմ

ՄԱՅՐԱՆԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՆԵՐ

ԶԱՆՈՒՄ

Փոխարկարանի Զանուց

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՆԵՐ

Մարտի 1-ին 1880 թ. հունիսի 1-ին

Մարտի 1-ին 1880 թ. հունիսի 1-ին

Մարտի 1-ին 1880 թ. հունիսի 1-ին

Մարտի 1-ին 1880 թ. հունիսի 1-ին



Մարտի 1-ին 1880 թ. հունիսի 1-ին

ՀԱՅԿԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ

ՓՈՒԼՈՒՆԵՐ



ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ

ՓՈՒԼՈՒՆԵՐ

ՀԱՅԿԱՆ

Մարտի 1-ին 1880 թ. հունիսի 1-ին

ՆՇԱՆԿ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Փոխադրուած ըլլալով՝

Կ. ՊԵՂԻՍ, ՊԱՊԸ ԱՂԻ ԶԱՏՏԷՍԻ, ԹԻՒ 38. ԻԳՏԱՄ ԼՐԱԳՐԻ ԴԻՄԱՅ

Ստացած է տպագրական նոր

կազմակերպութիւններ

եւ կը տպագրէ ամէն
սեսակ գիրքեր, մահ-

ազդեր, հանդեսներ, օրագրերականներ, հարսանեաց հրաւիրագրեր, նամակագրութիւններ, այ-
ցաբարդեր, եւ տպագրութեան վերաբերեալ ամէն սեսակ պիտոյքներ: — Տպարանին սեփական
2000է աւելի պատկերներ յանախորդաց տրամադրութեան տակ են ձրի:

Անմիջեղի մատուցելու եւ նշանակաւորեալ

գաւառներէն ալ կ'ընդունի ամէն սեսակ յանձնարարութիւններ:




ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ նոր բացած Շարադրութեան մրցումներն
մասնակցողները պարտին սոյն կտրոնը կտրելով՝ իրենց զը-
րութեանց հետ ղրկել խմբագրութեանս, հակառակ պարտ-
գային՝ նկատողութեան չեն առնուիր:

Հանրագիտակ ձեռքի կը ծախուի Պոլսոյ մէջ հատ
40, իսկ գաւառաց մէջ 50 փարսոյ:

Թ Է Յ

Թ Է Յ

Թ Է Յ



Ը Ն Տ Ի Ր

Հ Ո Տ Ա Ի Է Տ

Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը պատրաստ՝ և թէ օր ըստ օրէ
ն յնոր թարմ և աղնուագոյն տեսակ թէյերով կրնայ այսօր անմիջեղի ածանութեամբ
հացում տալ նոյն իսկ էն խտապահանջ թէյի սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ և ԻՍԱ-
ԳՈՒԼԵԱՆ հաստատութիւնը կը թղթակցի գաւառներու հետ եւ յանձնարարութիւններ կ'
կատարուին ամենայն ճշգրտութեամբ:

Ա. Բ. Ն., ընտիր ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարենք ան-
զամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, ձէլալ-Պէյ խանի
կից թիւ 10, ուր պիտի գտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի ճոխ մթերք մը:

Ա. Բ. Ն.

Ա. Բ. Ն.

Ա. Բ. Ն.